Քրիստոսի 330 թուին կատաւնները քանդելով՝ տեղը Քրիստոսի Խաչի նշանը կանգնեցրին. ինչպէս Հայաստանում Թադէոս և Բարդուղիմէոս Առաքեալները Քրիստոսի 35 և 65 թուին, և սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Քրիստոսի 305 թուին կանգնեցրին։

Սաղիանի վանքի 1768 թուին նորոգութեան համար Սիմէօն կաթուղիկոսի յանուն Զամախու առաջնորդ Սահակ վարդապետի տուած կոնդակի պատճէնը արտագրել այս տեղ հարկ համարեցի, որ կարդացողները իմանան թէ Սաղիանի վանքը երբ և ինչպէս է նորոգուել, եւ այս պատճէնը օրինակել եմ Սիմէօն կաթուղիկոսի կոնդակաց սեպտեմբեան ամսոյ՝ յերես 32ն, որը ս. Էջմիածնայ դրադարանի ընդհանուր ձեռագիրը դրանց ցուցակի 748 համարն է կրում, և ահա այն կոնդակի պատճէնը.

ՊԱՏՃԷՆ

Կնիք
1768.

«Սիմէօն ծառայ Քրիստոսի և ողորմութեամբ Նորին կաթուղիկոս ամենայն Հայոց և ծայրագոյն պատրիարք սրբոյ Էջմիածնի. սիրելի ժողովրդեան Շամախւոյ և Շիրուանու։

«Ողջ կայք ընակեալք ի տէրունի վիճակի սրբոյ Աթոռոյս, ՚ի բոլոր տանդ Աղուանից այսինքն՝ ի յօրինեալ՝ և յԱստուածախնամ քաղաքդ Գեանճայ, և ի համայն վիճակս դորին. ի բոլոր երկիրդ Խամսայու, և Ջուշու, և յամենայն նահանգս և ի դիւղօրայս դորին... ՚ի Շամախի և յամենայն գաւառս դորին, ՚ի Շաքի, ՚ի Նուխի և յայլ ամենայն շրջակայ գաւառս դոցին՝ ՚ի բոլոր երկիրդ Շիրուանու։ Այլ և ի Բաղու, և ի Դարբանդ, և յամենայն շրջակայ գաւառս և ՚ի դիւղօրայս դոցին, ՚ի Տիրա-